Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գևորգ Սուրենի Պետրոսյանի «Ներդրումային միջավայրի էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Երկրի ներդրումային միջավայրը հանդիսանում է կարևոր տնտեսական կատեգորիա, որն իր մեջ ներառում է հարցեր կապված տնտեսական աճի, երկրի արտադրողականության և բնակչության կենսամակարդակի հետ: Յուրաքանչյուր երկրում ներդրումային գրավչության մակարդակի բարձրացումը համարում է առաջնային հիմնախնդիրներից մեկը, որի արդյունքում որդեգրվում են բազմաթիվ ռազմավարություններ: Դրանք էլ իրենց հերթից կախված են բազմաթիվ գործոններից, որոնք ազդում են երկրի ներդրումային միջավայրի վրա:

Երկրի ներդրումային գրավչության բարձր մակարդակի ապահովումը առանցքային դեր ունի տնտեսական մի շարք կատեգորիաների համար, քանի որ այն հանդիսանում է այն առաջնային աղբյուրներից մեկը, որով սնվում է երկրի տնտեսությունը, իսկ երկրի տնտեսությունը իր հերթին ապահովում է բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացումը:

Երկրի ներդրումային միջավայրի գրավչությունը գնահատելը կարող է բավականին բարդ առաջադրանք լինել և՛ ինստիտուցիոնալ կառույցների համար, որոնք կազմում են դեպի երկիր ներդրումներ գրավելու բազմապիսի ռազմավարություններ, և՛ ներդրողների համար, ովքեր ցանկանում են իրենց կապիտալը ներդնել և շահույթ ստանալ: Այդ պատճառով անցյալ դարի 80-90-ական թվականներից իրականացվում են բազմապիսի ուսումնասիրություններ և

հետազոտություններ երկրի ներդրումային միջավայրի գրավչության մակարդակի ներկայացման ձևերի առումով, իսկ 2004 թվականին Համաշխարհային Բանկում ստեղծվում է ներդրումային կլիմայի ուսումնասիրության խումբը, որի նպատակն է բացառապես իրականացնել տարբեր երկրների, տարածաշրջանների և գլոբալ մակարդակի ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում են ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների ազդեցությունները և հետևանքները:

Տարբեր համաշխարհային կազմակերպություններ սկիզբ դրեցին ներդրումային միջավայրի գրավչության մակարդակը ներկայացնող համաթվերի հաշվարկմանը, որոնք էլ ավելի դյուրին կդարձնեին տարբեր երկրների ներդրումային միջավայրերի առկա իրավիճակի ծանոթացմանը, առկա խնդիրների բացահայտմանն ու դրանց լուծումների տրմանը և այլն: Այդպիսի համաթվերից են՝ Համաշխարհային Բանկի կողմից հաշվարկված Բիզնես գործունեությամբ զբաղվելու դյուրինության համաթիվը, Գլոբալ տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության համաթիվը, Ֆրեյզերի ինստիտուտի կողմից հաշվարկվող Տնտեսական ազատության համաթիվը և այլն: Սույն համաթվերը տարբերվում են իրենց մեթոդաբանությամբ և ներառում են բազմաթիվ ոլորտների գործունեության արդյունավետությունների հաշվարկների միավորում: Սույն համաթվերը պահանջում են առավել խորը ուսումնասիրություն և ճիշտ մեկնաբանում, որոնք հիմք կհանդիսանան ներդրումային գործունեության ռազմավարության մշակման համար:

Այսպիսով, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ հիմնավորումներով, որոնք արտացոլում են գիտականորեն հիմնավորված էմպիրիկ վերլուծությունների անհրաժեշտությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության հիմնական **նպատակն** է իրականացնել Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնների համակարգում և գնահատել դրանց ազդեցության մակարդակները: Որպես ներդրումային մի-

ջավայրի չափորոշիչ առանձնացվել է ՀՀ ՕՈՒՆ-ների ծավալը: Ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- համակարգել և ուսումնասիրել ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնները,
- ուսումնասիրել տարբեր համաշխարհային կազմակերպությունների կողմից հաշվարկվող, ներդրումային միջավայրի գրավչությունը նկարագրող համաթվերը,
- հավաքագրել տվյալներ տարբեր աղբյուրներից, որոնք կարող են կիրառվել տնտեսամաթեմատիկական մոդելի գնահատման համար,
- գնահատել Փոքրագույն Քառակուսիների մեթոդով գծային ռեգրեսիոն մոդել, որը հնարավորություն կտա առաջնային տեղեկատվություն ստանալ ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների ազդեցության աստիճանների վերաբերյալ,
- իրականացնել Գրադիենտային Խթանման ալգորիթմի միջոցով համակարգված գործոնների ազդեցության կարևորության աստիճանների գնահատում,
- կատարել ՀՀ ՕՈՒՆ ծավալի կանխատեսում՝ կիրառելով ARIMA ժամանակային շարքերի կանխատեսման մոդելը:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն շարադրված է 117 մեքենագիր էջերի վրա:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են գիտական նորույթները և արդյուքների տեսական ու գիտական նշանակությունը:

Աշխատանքի առաջին՝ **««Ներդրումներ» և «ներդրումային միջավայր» հասկացությունների տնտեսագիտական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել են տարբեր տնտեսագետների և հետազոտողների կողմից տրվող ներդրումների և ներդրումային միջավայրերը

բնութագրող սահմանումներ, ներդրումային գործընթացի փուլերը և ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնների համակարգումը:

Աշխատանքի երկրորդ՝ **«Ներդրումային միջավայրը կարգավորող ցուցանիշների վերլուծություն»** գլխում նախ ուսումնասիրվում է ՀՀ օտարերկրյա ներդրումների պատմական դինամիկան, որի շրջանակներում իրականացվում են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի և Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի կողմից տարեկան կտրվածքով տրվող ՕՈՒՆ ցուցանիշների ներկայացում և ուսումնասիրություն: Տվյալները ներկայացվում են ծավալային, ՀՆԱ-ի մեջ կշռով, տարբեր երկրների հետ համեմատությամբ, ներդրումների աղբյուր հանդիսացող տարբեր երկրների և ներդրումային ոլորտների տեսանկյունից:

Այնուհետև համակարգվել և ուսումնասիրվել են տարբեր համաշխարհային կազմակերպությունների կողմից հաշվարկված համաթվերը, որոնց նպատակն է ներկայացնել տարբեր երկրների ներդրումային միջավայրերի գրավչության աստիճանը:

Աշխատանքի երրորդ՝ **«ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատումը»** գլխում իրականացվել է ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող համակարգված տարբեր գործոնների վերաբերյալ տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն: Գնահատվել են ռեգրեսիոն մոդելներ և իրականացվել է ՕՈՒՆ ծավալի կանխատեսում մինչ 2027 թվականը:

«Եզրակացություններ» բաժնում համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրահանգումները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության օբյեկտը ՀՀ ներդրումային միջավայրն է՝ որպես գործընթաց և որպես համակարգ, իսկ հետազոտության առարկան ներդրումային միջավայրի գրավչությունը գնահատող համաթվերն են, ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները:

Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մի շարք հետազոտողների կողմից հրապարակված նյութեր, հոդվածներ և գրքեր, ինչպես նաև ՀՀ մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են մի շարք վիճակագրական, էկոնոմետրիկ և մեքենայական ուսուցման մոդելներ և ալգորիթմներ: Իրականացվել են ժամանակային և տարածական շարքերով էկոնոմետրիկ մոդելների գնահատում, մասնավորապես, Փոքրագույն Քառակուսիների մեթոդով (OLS), Գրադիենտային խթանման ալգորիթմով (Gradient Boosting Algorithm), ARIMA և SARIMA ժամանակային շարքերի կանխատեսման մոդելներով: Վերլուծությունների արդյունքները ամփոփվել են աղյուսակների և գծապատկերների միջոցով:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեի հրապարակումները, Համաշխարհային Բանկի տվյալների բազայի տարեկան հրապարակումները:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդաբանական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ՝ առանձնանում են հետևյալները.

- Մշակվել է ներդրումային միջավայրը գնահատող համաթվերի մեթոդաբանություն՝ վերհանելու ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող դրական և բացասական ոլորտները: Իրականացվել է երրորդ և չորրորդ մակարդակի ենթաոլորտների և բաժինների արդյունքների վերհանում: Բացահայտվել է, որ ՀՀ իրավական դաշտը առավել թույլ օղակն է ՀՀ ներդրումային միջավայրի գրավչության ապահովման համար՝ մասնավորապես դատական համակարգը և սեփականության իրավունքի պաշտպանությունը:
- Համակարգվել են ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները, որոնք առավել լայնամասշտաբ են՝ ընդհանուր թվով 37-ը: Իրականացվել է տվյալների շարքի ար-

հեստական մեծացում էքսպոնենցիալ ինտերպոլյացիայի միջոցով: Ձևավորված մոդելի արդյունքում ստացվել է, որ ՀՀ ՕՈՒՆ ծավալի վրա քանակային ամենամեծ ազդությունը միավոր փոփոխության դեպքում ունի վերլուծությունների և զարգացման վրա ծախսերի (ՀՆԱ-ի մեջ) գործոնը, որը մեծանալով 0.22 տոկոսային կետից մինչ 1.22 տոկոսային կետ, կհանգեցներ ավել 121.7 մլն ԱՄՆ դոլարի ներդրման:

- Բացահայտվել է, որ ընտրված և կոռելյացիայի մատրիցայի թեստավորման փուլից հետո մնացած 10 գործոնների մեջ ամենամեծ կարևորությունը ունի կազմակերպությունների կշիռը բոլոր կազմակերպությունների մեջ, որոնք ներդրման համար օգտվում են բանկային համակարգից գործոնը, որի կարևորության աստիճանը ընդհանուրի մեջ կազմել է շուրջ 68.5 տոկոս:
- Կանխատեսվել է ՀՀ ՕՈՒՆ ծավալը մինչ 2027 թվականը՝ կիրառելով ARIMA և SARIMA ժամանակային շարքերի կանխատեսման մոդելները: Բացահայտվել է, որ եթե մինչ 2022 թվականի դեկտեմբերի դինամիկան մնա անփոփոխ, ապա 2027 թվականին ՀՀ ՕՈՒՆ ծավալը կկազմի 2.5 մլրդ ԱՄՆ դոլար:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնք ամփոփվում են հետևյալ դրույթներում.

1. Ատենախոսության թեմայի, ատենախոսության նպատակի և խնդիրների միջև առկա են որոշակի հակասություններ: Թեմայի անվանումը՝ «Ներդրումային միջավայրի էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատում (ՀՀ օրինակով)", իսկ ատենախոսության հիմնական նպատակն է՝ «իրականացնել ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնների համակարգում և գնահատել դրանց ազդեցության մակարդակները»: Նախ անհրաժեշտ է սկզբից գործոնները **բացահայտել,** հետո դրանք **համակարգել** և նոր միայն **գնահատել**:

2. Որպես ներդրումային միջավայրի չափորոշիչ առանձնացվել է **ՀՀ ՕՈՒՆ**-ների **ծավալը,** այն դեպքում, երբ **հետազոտության առարկան** ներդրումային միջավայրի **գրավչությունը** գնահատող **համաթվերն են և տնտեսական աճը** (սեղմագրի 4-րդ էջ) և եթե «**տնտեսական աճ**» եզրույթի փոխարեն կիրառվեր և գնահատվեր «**կայուն տնտեսական աճ**» եզրույթը, ապա աշխատանքն ավելի կարժեքավորվեր:

3. Ատենախոսության առաջին նորույթն ամբողջությամբ վերանայման կարիք ունի: Որպես գիտական նորույթ՝ առանձնացվել է հետևյալը. «մշակվել է ներդրումային միջավայրը գնահատող համաթվերի մեթոդաբանություն՝ վերհանելու ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող դրական և բացասական ոլորտները»: Դա չի համապատասխանում իրականությանը՝ ատենածոսությունում բացակայում է որպես արդյունք որևէ **մեթոդաբանություն,** բացի այդ տեղ է գտել «**գործոն**» եզրույթի փոխարինումը «**ոլորտի**» հետ:

4. Ատենախոսության երկրորդ նորույթը նույնպես վերանայման կարիք ունի: Անհասկանալի է ինչու **ձևավորված մոդելը** չի դիտարկվել հստակ որպես նորույթ:

5. Բացակայում են հղումներ ՀՀ-ում և արտասահմանում նման թեմայով կատարված հետազոտությունների՝ ատենախոսությունների սեղմագրերի վրա, այն դեպքում, երբ հղումների ցանկում առկա են մի շարք դասագրքեր, օրինակ ըստ համարների. 11, 13, 22, 25, 26, 28:

6. Ատենախոսության բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակը չի կատարել հղում իր կողմից ներկայացված 6 գիտական հոդվածներից որևէ մեկի վրա: Դա կարելի է դիտարկել որպես ինքնապլագիատի դրսևորում, որը հակասում է ՀՀ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԻ 11-րդ կետի պահանջներին՝ *Ատենախոսության մեջ հայցողը պարտավոր է նշել այն հեղինակներին և աղբյուրները, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա: **Գևորգ Սուրենի Պետրոսյանի «Ներդրումային միջավայրի է նդոգեն և էկզոգեն գոր-**

Վերոնշյալ դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա: **Գևորգ Սուրենի Պետրոսյանի «Ներդրումային միջավայրի էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատում (ՀՀ օրինակով)»** թեմայով ատենախոսությունը կարող է որակվել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ առաջ են քաշվել ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներ և մշակվել ու առաջարկվել դրանց հնարավոր լուծումներ:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլված են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի հանդեսներում տպագրված թվով 6 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են առաքված սեղմագրում: Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական և կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Գևորգ Սուրենի Պետրոսյանի «Ներդրումային միջավայրի էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը** համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ
Գ.Ա. Վահանյան

«17» հուլիսի 2024թ.

ԳՐԻԳՈՐԻ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«17» հուլիսի 2024թ.